ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

Գործունեության ծրագրային կազմակերպման մեթոդաբանություն

Հարցադրման անհրաժեշտությունն ու արդիականությունը (սոցիալական իրողության ծրագրանպատակային պայմանավորվածությունը)

Սոցիալական իրողության ծրագրանպատակային պայմանավորվածության սկզբունքը, ըստ էության, նշանակում է, որ սոցիալական երևույթներն ունեն սուբյեկտիվ կանխորոշվածություն: Այն բացառում է սոցիալական իրողության նախկին ու հաջորդ իրադրությունների միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Առօրյա, սովորական իրադրություններում այդ հարցը գրեթե ակնհայտ է (ահա այս պահին ես միտումնավոր կընդհատեմ հոդված գրելս, կխաղամ որևէ համակարգչային խաղ և հետո կվերադառնամ՝ իմ աշխատանքը շարունակելու… Ահա վերադարձա և շարունակում եմ հոդված գրելը: Վերջին 20 րոպեների իմ գործունեությունը պայմանավորված էր իմ հանկարծակի որոշումով և կանխորոշված չէր 40 րոպե առաջ ստեղծված հանգամանքներով):

Ավելի դժվարընկալելի է գլոբալ մասշտաբի սոցիալական իրողության օբյեկտիվ օրինաչափությունների ու օրենքների բացակայության հարցը: Եվ դա պատահական չէ: Մենք կարող ենք անդրադառնալ մարդկության պատմությանը, առանձնացնել բազմիցս կրկնվող փաստեր ու երևույթներ՝ ընդհանրացնելով ու ձևակերպելով դրանք որպես պատմական օրինաչափություններ: Օրինակ՝ հասարակական-տնտեսական կացութաձևերի հերթափոխությունը, ուսուցման կազմակերպման պատմահասարակական փուլերի հերթափոխությունը, մտածողության պատմական զարգացման ֆորմացիաների առկայությունը: Սակայն պատմական օրինաչափությունը դեռ սոցիալական իրողության օրինաչափություն չէ: Բանն այն է, որ մարդկությունը դեռ ձևավորված չէ որպես մեկ միասնական սուբյեկտ, որն ընդունակ լինի ծրագրել համամարդկային մասշտաբի իրադրություններ[1]:

Սակայն մարդկային հասարակության բազմաթիվ խոշոր կազմավորումներ ու միավորումներ (պետություններ, ազգեր, կուսակցություններ և այլն) տիրապետում են ինքնակազմակերպման միջոցներին ու ձևերին, որոնք նրանց հնարավորություն են տալիս համակեցութային նախադրյալ հանգամանքներում դրսևորվել որպես մտագործունեության սուբյեկտներ:

Սոցիալական կազմավորվածության հենց այս պահանջմունքն ու անհրաժեշտությունն էլ (տիրապետել ինքնակազմակերպման միջոցներին ու ձևերին և դրա շնորհիվ դրսևորվել որպես մտագործունեական սուբյեկտ) հենց առաջ է բե-

[1] Այս առիթով մեջբերենք Ժան Պոլ Սարտրի «Մեթոդի պրոբլեմները» աշխատությունից մի հատված (տե՛ս [88]). «Այս բազմանշանակ աշխարհում մեր պատմական խնդիրն է մոտեցնել այն պահը, երբ պատմությունը ձեռք կբերի մեկ միասնական իմաստ և կձգտի նրան, որ տարրալուծվի կոնկրետ մարդկանց մեջ, որոնք համատեղ կկերտեն այն»:

րում գործունեության ծրագրային կազմակերպման պրոբլեմատիկան:

Հիմնական մոտեցումները, դրանց նշանակությունն ու սահմանափակությունները

Ցանկացած անհատական կամ հավաքական սուբյեկտ, այսպես թե այնպես, կանխորոշում է իր ապագա գործունեությունը և ջանում այն ծավալել գիտակցաբար: Ապագա գործունեության կանխորոշման որակից, բնույթից ու ձևերից կախված՝ օգտագործվում են տարբեր տերմիններ՝ պլան, նախագիծ, ծրագիր, սցենար, քաղաքականություն, ռազմավարություն, մարտավարություն, հայեցակարգ և այլն: Մեթոդաբանական առումով օգտագործվում են այնպիսի տերմիններ, ինչպիսիք են նպատակային մոտեցումը, նախագծային մոտեցումը, ծրագրային մոտեցումը, սցենարային մոտեցումը և այլն: Տարաբնույթ սահմանումների ու մոտեցումների առկայությունը վկայում է մի կողմից՝ «ծրագիր» հասկացության կառուցման հիմնահարցի արդիականության, մյուս կողմից՝ գոյություն ունեցող սահմանումների ու մոտեցումների սահմանափակությունների ու թերությունների մասին:

Իհարկե, կարելի է ինչ-որ կերպ սահմանել ու համադրել վերոնշյալ հասկացություններն ու տերմինները: Սակայն մի շարք սահմանափակություններ կապված են հենց այդ հասկացությունները միավորող ելակետային հասկացության բացակայության հետ: Մասամբ այդ սահմանափակությունները հաջողվում է հաղթահարել «ծրագրայնորեն կազմակերպված գործունեություն» և «ծրագրային պատկերացումներ» հասկացությունների ներմուծման հաշվին:

Նկատենք, որ խոսքը ճշմարտության կամ օբյեկտիվ օրինաչափությունների բացահայտման մասին չէ: Խոսքը վերաբերում է ապագան կերտող համամարդկային գործունեությանը արդյունավետորեն մասնակցելու համար անհրաժեշտ մեթոդաբանական միջոցների ու տեսական պատկերացումների կառուցմանը:

Ծրագրայնորեն կազմակերպված գործունեության էությունը

Իրական գործունեությունը, այսպես թե այնպես, ներկայացված է իդեալական իրողության մեջ և ծավալվում է սուբյեկտի գործողություն կատարելու միջոցով: Ընդ որում՝ հենց սուբյեկտներով է տրվում և դրսևորվում մտագործունեական իրողության ամբողջականությունն ինքնին: Ինքը՝ գործողության կատարումը, առարկայացնում է անցյալի ու ապագայի միջև սուբյեկտիվորեն տրված կապը և միաժամանակ առաջացնում է անհրաժեշտություն՝ վերափոխելու ձևավորված պատկերացումները իդեալական իրողությունում:

Փաստորեն, հենց այս է ծրագրայնորեն կազմակերպված գործունեության էությունը[1]:

Առանձնացնենք մի շարք հանգուցային պահեր.

1. Իրական գործունեությունը ծավալվում է սուբյեկտների կողմից գործողություն կատարելով: Հենց սա է պատճառը, որ գործունեության նախագծման

[1] Կարծեմ «մտագործունեությունը ծրագրայնորեն կազմակերպված գործունեությունն է» բանաձևումը հայտնի մեթոդաբան Սերգեյ Պոպովինն է:

հարցում գլխավորը գործողությունների, գործընթացների և պրոցեդուրաների նախագծումն է:

2. Անցյալի և ապագայի կապը նախապես տրվում է սուբյեկտիվորեն: Սա է արտացոլում նախագծման, ընդ որում՝ ոչ թե արդյունքի, այլ գործողության ու գործընթացի նախագծման, իմաստը:
3. Գործողության կատարումը անցյալի ու ապագայի միջև կապի առարկայացումն է: Փաստորեն, իրականացման ակտը առարկայացման ակտն է (ի դեպ, իդեալականացման ակտը կոնկրետ գոյություն ունեցող իրական երևույթի վերակառուցման ակտն է իդեալական իրողությունում):
4. Գործողության կատարումն առաջ է բերում իդեալական իրողությունում ձևավորված պատկերացումների վերաձևավորման անհրաժեշտություն: Ի դեպ, հենց սրանով է տրվում ռեֆլեքսիվ ակտերի ու պրոցեդուրաների իմաստը:

Ծրագրայնորեն կազմակերպված գործունեության գործընթացային կառուցվածքը

Ծրագրայնորեն կազմակերպված գործունեությունը պարունակում է երկու հենքային գործընթացներ.

- գործունեության (ոչ միայն նրա արդյունքի) նախագծման (և վերանախագծման),
- իրականացման,

և երկու սպասարկող գործընթացներ՝

- հետազոտման[1],
- կրթական[2]:

Այդ գործընթացներն ընդգրկվում են մեկ ընդհանուր կառուցվածքային ամբողջության մեջ՝ ի հաշիվ կազմակերպման, ղեկավարման ու կառավարման գործընթացների:

Ծրագրային պատկերացումներ

Տարբերակենք ծրագրային պատկերացումներն այլ տեսակի պատկերացումներից՝ տեսական, հայեցակարգային, գիտական, փիլիսոփայական և այլն: Ծրագրային պատկերացումներում համակարգաստեղծը, գլխավորը հանդիսանում է «ի՞նչ է արվելու» հարցադրումը (ուշադրություն դարձնենք՝ ոչ թե «ի՞նչ են ցանկանում անել» կամ «ի՞նչ պետք է անել», այլ՝ «ի՞նչ է արվելու»): Ծրագրային պատկերացումներն

[1] Այս առիթով Յու. Գրոմիկոն շատ ճշգրիտ ու ըմբռնելի նկատում է. «...Հետազոտությունը դառնում է նախագիծ 1-ից ավելի կոնկրետացված ու ավելի ճշգրտված նախագիծ 2-ին անցնելու քայլի ներքին պահը, իսկ ինքը՝ նախագծման ու հետազոտման կապը (որտեղ հետազոտման հիման վրա բացահայտվում են առարկայի նորանոր բնութագրիչներ, որոնք պահանջում են ստեղծել նոր ավելի կոնկրետ նախագիծ) կազմում է գործունեության նոր համալիր տեսակ՝ ծրագրավորում, որը ներառում է և՛ նախագծումը, և՛ հետազոտումը (մանրամասն տե՛ս [68])։

[2] Կրթական գործընթացների ներառումը ծրագրայնորեն կազմակերպված գործունեության կազմում՝ որպես անհրաժեշտ բաղադրամաս, հարկադրում է վերաիմաստավորել կադրերի անընդհատ ու շարունակական պատրաստման և վերապատրաստման գործընթացները (այս մասին մանրամասն տե՛ս [95])։

ընդգրկում են առնվազն պատկերացումներ սուբյեկտի ու նրա նպատակների, նպատակների իրականացման գործընթացների, միջոցների ու հանգամանքների, սպասվող պրոբլեմների վերաբերյալ: Ծրագրային պատկերացումներում հատուկ տեղ են գրավում պատկերացումները հենց իրենց՝ պատկերացումների մասին:

Ծրագրային պատկերացումների ձևավորման սկզբունքները

Ծրագրային պատկերացումների ձևավորման պրոբլեմը շոշափում է իդեալական իրողությունում նոր կերպարների ձևավորման ու առաջացման հարցը: Չշեղվելով այդ չափազանց բարդ մեթոդաբանական ու հոգեբանական պրոբլեմները քննարկելու խնդրից՝ փորձենք առանձնացնել մի շարք սկզբունքներ, որոնք հնարավորություն են տալիս կատարելագործել ծրագրային պատկերացումների որակը այդ պատկերացումների ձևավորման գործընթացների ռացիոնալ կազմակերպման դեպքում.

- Կոնկրետ գործունեության ծրագրային պատկերացումների կրողն այն սուբյեկտներն են, որոնց կողմից իրագործվում է այդ գործունեության գործընթացների արհեստական բաղադրիչը (այլ կերպ ասած՝ ծրագիրն իրականացնում է նա, ով ծրագրավորում է):
- Գործունեության ծրագրային պատկերացումներում որոշակիության աստիճանը (համապատասխանաբար՝ անորոշության աստիճանը) հակադարձ համեմատական է այդ գործունեության մասշտաբներին: Այս սկզբունքը ծնում է ծրագրային պատկերացումների անընդհատ կոնկրետացման ու ճշգրտման անհրաժեշտություն:
- Գործունեության սուբյեկտը իր գործունեական որակով համապատասխանում է գործունեությանը; Հենց այս սկզբունքն է ենթադրում, որ ծրագրայնորեն կազմակերպված գործունեությունը ներառում է հատուկ կազմակերպված կրթական գործընթացները՝ որպես այդ գործունեության համակարգի բաղադրիչ:
- Նախագծվող գործունեության իրականացնելիությունը պայմանավորված է գործունեության նախանախագծային շրջանի պատմությամբ: Փաստորեն, ծրագրայնորեն կազմակերպված գործունեությունը գործունեության յուրաքանչյուր հատվածը հաջորդ ժամանակահատվածի գործունեության նախապատմության վերածելու գործընթացի ռացիոնալիզացման ու տեխնոլոգիզացման եղանակ է:

Այսպիսով, «ծրագիր», «ծրագրավորում» և նման այլ հասկացությունների ճշգրիտ սահմանումը տալու հարցադրումը անպտուղ է: Արժեքավոր են այնպիսի գործուն մեթոդաբանական պատկերացումների ու միջոցների մշակումն ու յուրացումը, որոնք հնարավորություն են տալիս սուբյեկտին դրսևորվել որպես ապագան

կառուցող սուբյեկտ:

Սովորական դարձած և մշտապես օգտագործվող «ծրագիր», «նախագիծ», «պլան» հասկացությունները շոշափում են ապագա գործունեության վերաբերյալ պատկերացումների տարբեր կողմերը: «Պլանը», որպես կանոն, վերաբերում է առաջիկա միջոցառումներին, իսկ «նախագիծը»՝ գործունեության կազմակերպչական կառուցվածքին: «Ծրագրեր» հասկացությունը հիմնականում արտացոլում է գործունեության նպատակները, խնդիրներն ու դրանց իրականացման փուլերը:

Ապագա գործունեության բոլոր կողմերին վերաբերող տարաբնույթ պատկերացումներն ընդգրկելով մեկ ընդհանուր «ծրագրային պատկերացումներ» հասկացության մեջ՝ մենք հնարավորություն ենք ստանում մի կողմից՝ պահել գործունեության համակարգային ամբողջությունը, մյուս կողմից՝ նվազեցնել «ծրագիր», «նախագիծ», «պլան» հասկացությունների ոչ ճշգրիտ սահմանման թերությունները (վերջիններս դառնում են օգտագործելի ավելի լայն հասկացության համատեքստում և ունենում են օժանդակ նշանակություն):

«Գործունեության ծրագրային կազմակերպում» հասկացությունը մի կողմից՝ կարևորում, արտացոլում և արտահայտում է գործունեությանը բնորոշ «արհեստական-բնական», «կազմակերպված-տարերային», «որոշակի-անորոշ», «կամային-հարկադրական» հարաբերությունները, մյուս կողմից՝ իդեալականի ու իրականի փոխկախվածությունն ու փոխպայմանավորվածությունը:

Հավելված 2

Մանկավարժության ելակետային կանխադրույթները

Ուսուցման արդյունքը զգալի չափով կախված է նրանից, թե ով է, ի վերջո, սովորողը և ինչպիսին է նրա պահվածքն ուսումնական գործընթացում: Այդ հանգամանքը հաճախ առիթ է տալիս, որ սովորեցնողն իր վրայից հանի ուսուցման անբավարար արդյունքի պատասխանատվությունը: Սա նաև հիմք է դառնում ուսուցման կազմակերպման տարատեսակ մոտեցումների ու հայեցակարգերի համար: Եթե հաշվի առնենք նաև տարբեր մասնագիտությունների ու շնորհների տեր մարդկանց՝ մանկավարժներին խորհուրդներ տալու և մանկավարժական խնդիրների լուծման տարբերակներ առաջարկելու զարմանալիորեն համառ ձգտումը, ապա կարելի է պատկերացնել, թե ինչպես են առաջ մղվում ու իրականացվում այնպիսի գաղափարներ ու մոտեցումներ, ինչպիսիք են համահավասարեցման, կոռեկցիայի, տարբեր թեքումներով դասարանների ստեղծումը կամ տարբերակված ուսուցումը, առարկայական ծրագրերի եռաստիճան մակարդակը և այլն:

Չնայած բազմաթիվ մանկավարժական հիմնահարցերի առկայությանը՝ մանկավարժական պրակտիկան չի կարող դադարեցվել մինչև համապատասխան լուծումներ կգտնվեն: Այդ իսկ պատճառով կարևոր նշանակություն ունեն այն մանկավարժական աշխարհայացքային կանխադրույթները, որոնք պայմանավորում են մանկավարժի մոտեցումներն ու վարքը և հեռու պահում նրան սխալ ու պատահական որոշումներ կայացնելուց մանկավարժական գործունեության դժվար ու անորոշ իրավիճակներում:

Ելակետային կանխադրույթներ

Առաջին՝ յուրաքանչյուր առողջ երեխա ի վիճակի է կատարելապես յուրացնել ցանկացած ուսումնական նյութ:

Երկրորդ՝ երեխաները տարբերվում են ոչ թե այս կամ այն ուսումնական նյութը յուրացնելու իրենց հնարավորություններով, այլ ուսումնական նյութի յուրացման ձևերի ու միջոցների անհատական յուրահատկություններով:

Երրորդ՝ ոսումնասիրվող նյութի նկատմամբ երեխայի հետաքրքրությունը պայմանավորված է ոչ այնքան այդ նյութի բովանդակությամբ, որքան դրա յուրացման ընթացքում երեխայի հաջող գործելու հանգամանքով:

Բացատրություններ և մեկնաբանություններ

1. Առաջին կանխադրույթի էությունն այն է, որ այն ամենը, ինչ հայտնի է մարդկությանը, ըմբռնելի ու հասանելի է յուրաքանչյուր երեխայի: Իհարկե, յուրաքանչյուր երեխա չի դառնա մեծ մաթեմատիկոս կամ ֆիզիկոս: Սակայն այն ամենը, ինչ հայտնի է մաթեմատիկայում կամ ֆիզիկայում և վերաձևակերպված է որպես ուսումնական նյութ, ամբողջովին կարող է յուրացնել յուրաքանչյուր երեխա:

Այս կանխադրույթը թույլ չի տալիս ուսուցման անհաջողությունը բացատրել

երեխայի անկարող լինելու հանգամանքով:

2. Բոլոր երեխաներն իրարից տարբերվում են: Նրանց տարբերությունը լավ կամ վատ լինելու մեջ չէ. իբր, մեկին հասանելի է գերազանց սովորելը, իսկ մյուսին՝ ոչ: Երեխաները տարբերվում են բնավորությամբ, խառնվածքով, մտածելակերպով և այլն: Սակայն նմանօրինակ տարբերությունները բնութագրում են նրանց յուրահատկությունները և համարվում են ներքին միջոցներ: Տարբեր երեխաների կյանքի նպատակներն ու խնդիրները կարող են միևնույնը լինել, բայց դրանք տարբեր ներքին միջոցների հաշվին են իրականացվում: Հենց նպատակների ու խնդիրների իրականացման միջոցների, ձևերի ու եղանակների ընտրության (և ոչ թե հանրակրթական խնդիրների, նպատակների և առարկայական ծրագրերի բարդության մակարդակի որոշման) հարցերում կարող են հաշվի առնվել երեխաների անհատական առանձնահատկությունները:

3. Շատ տարածված է այն երևույթը, երբ հոգատար ուսուցիչներն ու դասախոսները պարբերաբար փոփոխում են ուսուցվող առարկայի բովանդակությունը, ջանում ծրագրում ներառել հետաքրքիր, օգտակար տեղեկություններ՝ հուսալով, որ սովորողների մոտ հետաքրքրություն կառաջացնի և կնպաստի ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Կարելի է հիշատակել բազմաթիվ հեղինակավոր ուսուցիչների ու գիտնականների, որոնք խոստովանում են, որ այս մոտեցումը քիչ է օգտակար: Դա պատահական չէ: Հետաքրքրությունն առաջ է գալիս և չի մարում այն դեպքում, երբ ուսումնասիրվող նյութը հասկացվում ու յուրացվում է, երբ յուրացման գործընթացի յուրաքանչյուր պահ ավարտվում է հաջողությամբ: Երբ երեխայի որևէ քայլ, որևէ գործողություն հաջողվում է, նա պատրաստ է լինում անցնել հաջորդ քայլին: Երրորդ կանխադրույթը հավաստում է, որ ուսուցման արդյունավետության հարցերում որոշիչը ոչ թե այն է, թե ինչ է յուրացվում, այլ այն, թե ինչպես է յուրացվում:

Հավելված 3

Ժողովրդավարական հասարակարգի կայացման ընդհանուր մեթոդաբանական հիմնադրույթները

Մարդկային գործունեության ծավալման կարևորագույն նախապայմանը համակեցության հանգամանքն է: Այն անվերջ ու բազմաբնույթ ընդհարումների հիմնական պատճառն է և ծնում է համակեցության կարգավորման անհրաժեշտություն:

Մարդիկ, ընտանիքները, ազգությունները, կուսակցությունները, պետությունները և այլն ի սկզբանե «դատապարտված» են համատեղ լինել, գործել և ապրել:

Յուրաքանչյուր մարդ իր ամբողջ կյանքի ընթացքում հարկադրված է հաշվի առնել, որ միաժամանակ, իր հետ միասին, իր կողքին ապրում և գործում են այլ մարդիկ՝ իրենց ցանկություններով, նպատակներով, հետաքրքրություններով:

Այսպիսի իրավիճակ է ստեղծված նաև յուրաքանչյուր ընտանիքի, ազգության, պետության, կուսակցության և այլնի համար:

Ցանկացած մարդկային խումբ, մարդկային կազմավորում գոյություն ունի այլ մարդկանց ու մարդկային խմբերի առկայության պայմաններում և հարկադրված է հաշվի նստել այս հանգամանքի հետ:

Համատեղ լինելու և գործելու այս վիճակն էլ հենց մարդկանց ու մարդկային խմբերի միջև բազմաթիվ ու բազմաբնույթ ընդհարումների պատճառ է հանդիսանում:

Համակեցության հանգամանքով պայմանավորված՝ համակեցության սուբյեկտների (մարդկանց, պետությունների, հասարակական կազմակերպությունների և այլն) միջև անխուսափելիորեն ընթացող փոխազդեցություններն այդ սուբյեկտների միջև ստեղծում են համակեցության հարաբերություններ, որոնք դրսևորվում են հակամարտության, հարկադիր ենթարկվածության, ազատ մրցակցության և համագործակցության տեսակներով:

Հարկադրված լինելով միաժամանակ միևնույն տարածքում լինել ու գործել՝ մարդիկ և մարդկանց խմբերը, կախված իրենց շահերի համադրությունից կամ հակադրությունից, ստիպված են լինում մեկը մյուսի վրա ազդելու միջոցներ ու հնարավորություններ գտնել ու իրագործել: Ոմանք թշնամանում են, ոմանք՝ բարեկամանում, ոմանք հարմարվում են մյուսների թելադրանքին:

Որպես կանոն, այս հարաբերություններն անկայուն են. թշնամիները բարեկամանում են, բարեկամները՝ թշնամանում, ուժեղները թուլանում են, թույլերը՝ ուժեղանում… և այսպես շարունակ, անընդհատ, ամենուրեք, միշտ:

Հասարակությունը համակեցության սուբյեկտների (պետություններ, մարդկային խմբեր, հասարակական կազմակերպություններ, պետական կառույցներ, առանձին մարդիկ և այլն) բարդ կառուցվածք է, իսկ հասարակական կեցությունը՝ համակեցության գործընթացների բարդ ամբողջություն (կոնգլոմերատ):

Մարդիկ, մարդկային խմբերը, պետությունները և այլն, ի սկզբանե ներքաշված լինելով համակեցության խառնաշփոթ ու խառնիճաղանջ իրադրությունների մեջ, ստիպված են լինում այսպես թե այնպես կարգավորել իրենց համատեղ ու

միաժամանակյա գոյակցությունը:

Հասարակությունն իր զարգացման սկզբնական փուլերում նախապատվություն տալով համակեցության կարգավորման հարկադիր ենթարկվածության և հակամարտության ձևերին՝ աստիճանաբար արժեքավորում է համակեցության գործընթացների անկախ մրցակցության և համագործակցության ձևերը:

Համակեցության կարգավորման բնազդային ձևը ուժայինն է: Մարդն ընդհարվելով մեկ այլ մարդու հետ՝ բնազդաբար ձգտում է հարկադրել նրան ենթարկվել իր կամքին: Այս բնական (ավելի ճիշտ՝ կենդանական) ձգտումը շատ ընդունելի ու բնորոշ է մարդկության զարգացման վաղ շրջաններին:

Հակամարտությունը և ուրիշին ենթարկեցնելը դարերով եղել են ընդունելի, արժեքավոր և հիմնական ձևերը: Բազմաթիվ արյունահեղ պատերազմներն ու ողբերգություններն աստիճանաբար մարդկությանը հանգեցրին այն համընդհանուր գիտակցմանը, որ հակամարտությունը և հարկադիր ենթարկվածությունը պետք է դիտվեն որպես բացասական, անցանկալի երևույթներ:

Հետաքրքիր է, որ առանձին մարդու գիտակցությունը նույնպես անցնում է հասունացման նման ճանապարհ: Սկզբում երեխաները բնազդորեն դիմում են ուժային մեթոդների: Սակայն հասունացման, կյանքի փորձի և կրթադաստիարակչական մակարդակի բարձրացման շնորհիվ աստիճանաբար ձեռք են բերում ավելի քաղաքակիրթ վարվելաձև:

Չնայած համակեցության գործընթացների բոլոր ձևերի համախառն դրսևորման անխուսափելիությանը՝ հասարակության զարգացման ներկա փուլի առանձնահատկությունն այն է, որ գերադասվում է համակեցության կարգավորման անկախ մրցակցության ձևը: Սրանով են բացատրվում մի շարք լայն տարածում գտած քաղաքական ուղղությունների էությունը և զարգացած համարվող առաջատար պետությունների բնույթը:

Արդեն XXI դարում ապրող մարդկությունը դեռ չի կարող պարծենալ նրանով, որ հակամարտությունը որպես համակեցության կարգավորման ձև վերացել է: Դեռ չեն վերացել պատերազմներն ու արյունահեղությունները, տարածված են բռնություններն ու կոնֆլիկտները: Դեռևս շատերը ստիպված հարմարվում են հարկադիր ենթարկվածության վիճակին:

Սակայն մարդկանց կողմից սրանք արդեն միարժեքորեն որակավորվում են որպես անընդունելի ու բացասական երևույթներ: Հատուկ արժեք է ներկայացնում ազատությունն իր բազմաբնույթ ձևերով: Որպես քաղաքակիրթ ձևեր ընդունվում են միայն ազատ մրցակցությունն ու համագործակցությունը:

Ժամանակակից առաջավոր երկրները (ԱՄՆ, Ճապոնիա, մի շարք եվրոպական երկրներ) արդեն կարողացել են ստեղծել այնպիսի տնտեսական ու հասարակական համակարգեր, որոնց հիմքում ընկած է համակեցության կարգավորման *ազատ մրցակցության* ձևը:

Համագործակցությունն առայժմ հանդես է գալիս որպես լրացուցիչ տեսակ և գաղափարախոսական արժեք:

Ըստ երևույթին, մարդկության զարգացման ու հասունացման հաջորդ փուլի առանձնահատկությունները կդրսևորվեն նրանով, որ տնտեսական համակարգի և

հասարակության կացութաձևի հիմքում դրված կլինի համակեցության կարգավորման համագործակցային ձևը:

Խաղաղ գոյակցման պրոբլեմները

Հաճախ մարդկանց ու մարդկային խմբերի ընդհարումները տեղի են ունենում այն պատճառով, որ մարդիկ ու մարդկային խմբերն ունեն տարբեր խառնվածքներ, բնավորություններ, սովորություններ, ճաշակներ և այլն:

Նման դեպքերում համակեցության սուբյեկտներից յուրաքանչյուրը, ընդունելով մյուսների նպատակների ու ցանկությունների օրինականությունը, ստիպված է սահմանափակել սեփական հավակնությունները, *կասեցնել* հակամարտության ու ճնշումների միջոցով սեփական շահերի իրականացման *ներքին պոռթկումները* և որոնել բախումներից խուսափելու *քաղաքակիրթ ձևեր:*

Սակայն նկատենք, որ եթե վառ արտահայտված բարին ու ազնվությունը ընդհարվում են նույնպես վառ արտահայտված չարի ու անարդարության հետ, մենք անմիջապես համակրում ու գերադասում ենք բարին ու արդարը: Չարամտությունն ու նենգությունը շատ շատերի կողմից մերժվում ու վատաբանվում են: Յուրաքանչյուր մարդ, մարդկային խումբ իր գործունեության արդարացման ու իմաստավորման հիմքում միշտ դնում է բարի կամքի, օգտակարության, արդարության միտումները:

Բարու ու չարի *խաղաղ գոյակցումը* սկզբունքորեն անհնարին է: Նրանց անհամատեղելիությունն ու հակադրությունը երբեք չպետք է արհամարհվի, այլ պետք է *վերացվի* բարու հաղթանակի անհրաժեշտությամբ ոգեշնչվող *անհաշտ պայքարով:*

Ժողովրդավարության գաղափարախոսության ելակետային հասկացությունը

Ժողովրդավարության գաղափարախոսության ելակետային հասկացությունը *ազատությունն* է, որը ներկայանում է որպես *կամքի, մտածողության և գործունեության* ազատություն:

Հենց ազատ կամքի առկայությունն է սուբյեկտին սուբյեկտի որակ տալիս և ապահովում նրա ինքնուրույնությունը համակեցությունում:

Համակեցության սուբյեկտների ազատության դրսևորումները, բախվելով միմյանց, մի կողմից՝ առաջացնում են համակեցության կարգավորման անհրաժեշտություն, մյուս կողմից՝ նպաստում են ազատության մասին եղած *պատկերացումների վերաիմաստավորմանը:*

Ազատության ձգտման ու համակեցության իրողության հակադրումն ու համադրումը ստեղծում են այնպիսի գաղափարների առաջացման ու իրագործման անհրաժեշտություն, ինչպիսիք են օրենքը, իրավունքը, պարտականությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը և այլն:

Ժողովրդավարական հասարակությունը ենթադրում է համակեցության կարգավորման այնպիսի տարբերակ, որի դեպքում յուրաքանչյուր սուբյեկտ *հնարավորություն ունի* մասնակցել ընդհանուր գործունեության նպատակադրման,

ծրագրման, կազմակերպման, իրագործման ու իրավիճակի գնահատման գործընթացներին և *ապահովել* իրեն անհրաժեշտ ազատությունը:

Ժողովրդավարական հասարակարգի առանձնահատկությունները

Ժողովրդավարական հասարակարգը դրսևորվում ու ներկայանում է՝

- պետական մակարդակով, որը բնորոշվում է սահմանադրությամբ և օրենսդրական համակարգով,
- հասարակական միջավայրի մակարդակով՝ ներկայացվում է ժողովրդավարական կացութաձևն ու ապրելակերպը,
- անհատական մակարդակով, որը ենթադրում է ժողովրդավարական հասարակությանը համապատասխան անձի հատուկ որակ և վարվելակերպ:

Ժողովրդավարական հասարակարգի կառուցման օրինաչափություններն ու դժվարությունները

Գոյության պայքարի դաժան օրենքներն ու մարդկային կարողությունների սահմանափակությունը հանգեցրել են հասարակական կյանքի կազմակերպման այնպիսի ձևերի, որոնք, նպաստելով մարդկանց ու մարդկային խմբերի մի մասի ազատության ու արժանապատվության ապահովմանը՝ սահմանափակել ու ոտնահարել են մյուսների իրավունքներն ու ցանկությունները:

Մարդկության պատմությունը մի կողմից՝ դրսևորվել ու ձևավորվել է որպես տարբեր մարդկանց ու մարդկային խմբերի ազատագրման ու իրավունքների նվաճման, մյուս կողմից՝ որպես համընդհանուր արդարության ու արժանապատիվ հասարակարգի կառուցման ու կայացման գործընթաց:

Հասարակության պատմական զարգացման ընթացքը բազմիցս հանգեցրել է այնպիսի հասկացությունների վերաիմաստավորմանը, ինչպիսիք են ազատությունը, արդարությունը, արժանապատվությունը:

Ժողովրդավարությունը ոչ միայն կարևորագույն համամարդկային արժեքներից մեկն է, այլ նաև պետական ու հասարակական կյանքի կազմակերպման գլխավոր սկզբունքը:

Սակայն ժողովրդավարական հասարակարգի կառուցումը ենթադրում է մի շարք դժվարությունների հաղթահարում.

- Հաճախ սահմանադրությունը և պետական օրենքները ձևակերպվում են ժողովրդավարական սկզբունքներով, սակայն իրական կյանքում դրանք խեղաթյուրվում են: Սահմանադրությունը և օրենքները ձևական բնույթ են կրում:
- Ժողովրդավարական որոշ սկզբունքներ կարող են հակասել ազգային սովորույթներին ու ավանդույթներին: Վերջիններիս փոփոխությունները հաճախ հնարավոր են լինում միայն սերնդափոխությամբ:
- Ձևավորված հասուն անհատների բնավորության գծերն ու խառնվածքը դժվար են տրվում վերափոխման, որի պատճառով հաճախ ժողովրդավարության արժեքներն ընդունելով հանդերձ՝ նրանք դժվարանում են ապրել այդ արժեքներին համապատասխան:

Ժողովրդավարական հասարակարգի կայացման առանձնահատկությունները Հայաստանում

Հայ ժողովուրդը, լինելով հնագույն ժողովուրդներից մեկը, իր պատմությունը կերտել է երեք հիմնական՝

- *ազգի ազատագրման,*
- *պետականության վերականգնման և կառուցման,*
- *ազգի քրիստոնեական հավատքի պահպանման* գերխնդիրների իրականացման պայքարում:

Պատմական հայրենիքի մի հատվածում վերահաստատելով անկախ ու ինքնիշխան պետականության կազմավորման իր պատմական իրավունքը՝ հայ ժողովուրդը ձեռնամուխ է եղել ժողովրդավարական հասարակարգի կառուցման խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության ժողովուրդը, ընդունելով իր սահմանադրությունը, փաստորեն, ընտրել է սահմանադրական ժողովրդավարության տարբերակը: Սակայն պետականության կառուցման պատմական փորձի ու ավանդույթների բացակայությունն անդրադարձել է սահմանադրության և պետական օրենսդրության որակի վրա՝ ստեղծելով դրանց կատարելագործման անհրաժեշտություն: Մասնավորապես, դեռ անհրաժեշտ է սահմանադրորեն ճշգրտել հանրապետության տեսակը (նախագահակա՞ն, պառլամենտակա՞ն, թե՞ այլ):

Կյանքի ապահովության ու գոյատևման համար բազմադարյա պայքարը հայ ժողովրդի մեջ ձևավորել ու կարևորել է ազգակցական ու խնամակալական հարաբերությունների արժեքավորումն ու ամրապնդումը, որոնք հաճախ խոչընդոտում են սահմանադրորեն ամրագրված՝ անհատի ինքնուրույնության ապահովման իրավունքների իրագործմանը:

Դատապարտված լինելով երկար տարիներ գոյատևել պարտադրված ենթարկվածության իրավիճակում և հարկադրված լինելով համակեցությունը կարգավորել հիմնականում ազգային ավանդույթների ու տեղային սովորույթների միջոցով՝ Հայաստանի բնակչության մեջ չի ձևավորվել առանձնակի հարգանք ու պատկառանք պետական օրենքների նկատմամբ, ինչն օբյեկտիվորեն դժվարացնում է իրավական հասարակության կայացման ընթացքը:

Այս պարագայում հատուկ կարևորություն է ստանում համակեցության կարգավորման քաղաքակիրթ ձևերի *յուրացման* և ընդհանուր կրթադաստիարակչական մակարդակի բարձրացման *գաղափարախոսությունը:*

Հավելված 4

Քաղաքացիական կրթության դերն ու նշանակությունը բաց հասարակության կայացման հիմնահարցերում

Հասարակական կյանքի կազմակերպման, համակեցութային պրոբլեմների հաղթահարման, մարդկանց ու մարդկային միավորումների բարեկեցիկ գոյատևման ապահովման հարցերը բոլոր դարաշրջաններում էլ եղել են փիլիսոփայական և քաղաքական մտածողության հիմքում:

Ընդ որում՝ փիլիսոփայական և քաղաքական մտքի պատմական զարգացման խթանիչ գործոններից հիմնականները եղել են.

- ազատության գաղափարի և հասարակական իրողության համակեցութային բնույթի հակադրության անխուսափելիությունն ու նրանց համատեղության անհրաժեշտությունը,
- հոգևոր-հոգեկանի և աշխարհիկ-նյութականի հակադրությունն ու միասնականությունը:

Այդ հակադրությունների միասնականությունն էլ հենց որոշել է մարդու, մարդկային խմբերի և ընդհանրապես մարդկության կենսագրությունն ու պատմությունը՝ դրսևորվելով նրանց մտագործունեությամբ և արժևորելով «արդարություն» և «բարոյականություն» գաղափարները:

Սակայն հենց այս հանգուցային գաղափարները՝ «արդարությունը» և «բարոյականությունը», անընդհատ վերաիմաստավորվել ու վերամեկնաբանվել են՝ կախված տվյալ ժամանակաշրջանի արժեքային համակարգից և մարդկության հասունացման աստիճանից[1]:

Սակայն, եթե փիլիսոփայությունը հիմնականում հրապուրված է եղել գոյաբանությամբ՝ դրսևորվելով որպես ճանաչող ու մեկնաբանող մտածողություն, քաղաքականությունը զբաղված է եղել հասարակական կյանքի կառուցման ու վերակառուցման խնդիրներով: Ընդ որում՝ քաղաքական միտքը միշտ էլ սնվել է փիլիսոփայության նվաճումներով՝ հանդես գալով ոչ միայն որպես կիրառական փիլիսո-

[1] Ոչ միայն Աթենքի հասարակության էլիտար ներկայացուցիչների, այլև նույնիսկ ժողովրդավարության արժեքների նախահոր՝ Սոկրատեսի մտքով անգամ չէր կարող անցնել, որ կանանց ու ստրուկներին քաղաքացի չհամարելը որևէ առնչություն ունի արդարության գաղափարի հետ: Իսկ, ասենք, ստրուկների առաջնորդ Սպարտակի համար ոչ մի էական նշանակություն չուներ այն հարցը, թե երկիրը կկառավարի ժողովրդավարական սենատը, թե միապետ կայսրը:
Ռոբեսպիերյան Ֆրանսիայում քննարկվում էր իրավունքների հարցը՝ կապված արիստոկրատ կամ ոչ արիստոկրատ ծագում ունենալու հետ, իսկ կոմունիստական շարժման հիմքում արդեն ընկած էր պրոլետարիատի ազատության ու իրավունքների ձեռքբերման գաղափարախոսությունը:
Մեր ժամանակներում սեփական բարեկեցության ապահովման համար գողության կամ ուժային պայքարով ուրիշի սեփականությանը տիրելը համարվում է անբարոյական: Փոխարենը՝ անժխտելի արժեք և արդարության վերին աստիճանի դրսևորում են համարվում մրցակցային սկզբունքներով ու ազատ շուկայական տնտեսության հիման վրա կառուցված հասարակական կացութաձևն ու հասարակական հարաբերությունները:

փայություն, այլ նաև որպես փիլիսոփայական մտքի զարգացման պատվիրատու ու խթանիչ[1]:

Փիլիսոփայական ու քաղաքական մտքի փոխկապվածության ու փոխպայմանավորվածության նշանակալից նվաճումներից է նաև 20-րդ դարի կեսերին ձևավորված և արդեն համամարդկային արժեք համարվող, այսպես կոչված, բաց հասարակության գաղափարախոսությունը:

«Բաց հասարակություն» հասկացողության առաջացումն ու էությունը

Բաց հասարակության հարցերը քննարկելիս սովորաբար նկարագրվում է ժամանակակից առաջավոր երկրներից մեկի մոդելը: Այն ներկայացվում է որպես բաց հասարակության էություն կամ սահմանում: Սակայն դեռ վաղ շրջանի փիլիսոփաներն արդեն նկատել էին, որ նկարագրական սահմանումը թերի է և չի կարող նպաստել հարցի էության բացահայտմանը [4]:

Փորձենք ձևակերպել սկզբունքային նշանակություն ունեցող և բաց հասարակությունը բնորոշող կարևորագույն հայեցակարգային հիմքերը:

Բաց հասարակության գաղափարը շրջանառության մեջ է դրել Կարլ Փոփերը [48]: Այն առաջ է քաշվել ի հակադրություն, այսպես կոչված, փակ հասարակությունների, որոնց ներկայացուցիչներ էին համարվում այնպիսի երկրներ, ինչպիսիք էին նացիստական Գերմանիան և կոմունիստական Խորհրդային Միությունը:

Փակ հասարակությունները բնութագրվում են իրենց գաղափարական հայեցակարգի անսխալականության ընդունումով, ճշմարիտ գիտելիքների և հասարակության զարգացման օրինաչափությունների վերաբերյալ ճշգրիտ պատկերացումների տիրապետման համոզմունքով, կատարյալ հասարակական համակարգերի ու ենթահամակարգերի կառուցման հնարավորության ընդունումով: Այլ կերպ ասած՝ նման հասարակարգերում ընդունված գիտական տեսությունները, գաղափարական արժեքները, հայեցակարգային պատկերացումները փակ են քննադատության և ճշգրտումների համար: Դրա հետևանքով այդպիսի հասարակարգերում առանձնանում են ճշմարիտ գիտելիքների և անսխալական պատկերացումների կրողի համբավ վայելող հեղինակություններ, որոնց էլ վերապահվում է գլոբալ որոշումներ կայացնելու իրավունքը: Փակ հասարակության երկրներում կառավարման համակարգն անհրաժեշտաբար դրսևորվում է որպես կենտրոնացված բուրգաձև կառույց: Իհարկե, այս բոլորը ապահովվում են հատուկ օրենսդրական կարգերով և ենթադրում են համապատասխան ապրելաձև ու հասարակական հարաբերություններ:

Բաց հասարակարգերում ենթադրվում են վերջնական ճշմարտությունների առկայության անհնարինություն, ցանկացած գիտակցական պատկերացումների թե-

[1] Ժամանակակից փիլիսոփայական մտածողությունը նկատելիորեն հրաժարվում է իրողության նկատմամբ իր պասիվ բացատրողական (գերմենևտիկ) դիրքորոշումից հօգուտ վերափոխող կառուցողականի: Արդեն ձևավորվել է ընդհանուր մեթոդաբանությունը, որը ոչ միայն կարևորում ու ուսումնասիրում է հասարակագիտական ու բնագիտական գիտելիքների բնույթով, դերով ու նշանակությամբ արմատապես տարբեր լինելու հարցը, այլև ինքնահաստատվում է որպես մտագործունեության մեթոդների ու միջոցների մշակման առանձնահատուկ ոլորտ:

րի լինելու համոզմունք, հասարակական համակարգերի ու ենթահամակարգերի անխուսափելիորեն անկատար լինելու սկզբունք: Այլ կերպ ասած՝ նման հասարակարգերը բաց են քննադատության, կատարելագործման, ելակետային արժեքների ու մոտեցումների վերաիմաստավորման ու ձևափոխման համար: Սրանք, իհարկե, ենթադրում են յուրահատուկ օրենսդրական կարգեր, սովորույթներ ու ապրելակերպ և ձևավորում են համապատասխան հասարակական հարաբերություններ [48]:

Բաց հասարակության հայեցակարգային հիմքերը

Բաց հասարակության գաղափարախոսությունն առաջնային է համարում.

- անկախ գոյակցությունը՝ որպես համակեցութային հարաբերությունների հիմք,
- ազատ մրցակցությունը՝ որպես տնտեսական համակարգի հիմք,
- ներկայացուցչական ժողովրդավարությունը՝ որպես քաղաքական համակարգի հիմք:

Բաց հասարակության կայացման ու զարգացման երաշխիքներն են.

- հասարակության յուրաքանչյուր անդամի գործուն մասնակցությունը հասարակական կյանքի կազմակերպման ու կառավարման գործընթացներին,
- քննադատական մտածողության արժևորումն ու խրախուսումը,
- բազմակարծության և խոսքի ազատության առկայությունը,
- իրավունքների ու ազատությունների օրենսդրական ապահովումը:

Բաց հասարակության կայացման հիմնախնդիրները

Եթե փակ հասարակություններում, որպես կանոն, առկա է հասարակական կեցության և տնտեսության կազմակերպման բոլոր ոլորտների խիստ նպատակաուղղված կառավարման ու կարգավորման սկզբունքը, և դա բավական լուրջ ծայրահեղություն է, որը մի կողմից՝ անհրաժեշտություն է, մյուս կողմից՝ անխուսափելիորեն հանգեցնում է ճգնաժամային իրավիճակների, ապա բաց հասարակություններում տիրում է ազատ մրցակցային գաղափարախոսությունը՝ շուկայական տնտեսության սկզբունքներով: Սա էլ հակադիր ծայրահեղությունն է, որը, փաստորեն, գերադասում է մրցակցային տարերքը՝ որպես տնտեսության զարգացման և հասարակության բարգավաճման սկզբնաղբյուր:

Սակայն այս ծայրահեղություններից խուսափելու ցանկացած փորձ հանգեցնում է բավական բարդ պրոբլեմի. ինչպե՞ս առանձնացնել այն գործընթացները, որոնք հնարավոր է և պետք է կառավարել, և որո՞նք են այն գործընթացները, որոնք կառավարել չի կարելի[1]:

Բաց հասարակության կարևորագույն պրոբլեմներից է շուկայական արժեքների և բարոյական արժեքների հակադրությունը: Բանն այն է, որ շուկայական մրցակցության նպատակը հաղթելն է, որը, փաստորեն, նշանակում է սեփական

[1] Դեռ անցած դարի 20-ական թվականներին նորաստեղծ Խորհրդային Միության պրոբլեմները քննարկելիս Ն.Բուխարինն արդեն գիտակցում էր այս հարցի կարևորությունը և նրա սխալ լուծման կործանարար հետևանքները:

շահերի գերադասելիություն, իսկ սոցիալական արժեքները բխում են մարդասիրական նկատառումներից և ենթադրում են հանրային շահերի գերադասելիություն: Հատկապես այս պրոբլեմին մեծ կարևորություն է տալիս բաց հասարակության ամենավառ ջատագովներից մեկը՝ Ջորջ Սորոսը, իր վերջին աշխատություններից մեկում [48]:

Քաղաքացիական կրթության առանձնահատկությունները բաց հասարակության կայացման պրոբլեմների տեսանկյունից

Անժխտելի է այն, որ որպես համակեցության սուբյեկտներ կարող են հանդես գալ տարբեր բնույթի մարդկային միավորումները: Նրանց բնորոշ են որոշակի հատկանիշներ, որոնցով նրանք առանձնանում են որպես ինքնակա ամբողջություններ: Նման մարդկային բազմությունները, կախված իրենց ներքին կազմակերպվածության ձևերից, կարող են դրսևորվել տարբեր որակներով՝ ընդհուպ մինչև որպես մտագործունեության սուբյեկտներ:

Ըստ երևույթին, քաղաքացիական կրթության բովանդակության հիմնաքարը յուրաքանչյուր աշակերտի մեջ տարբեր հավաքական սուբյեկտների կազմավորիչ մաս հանդիսանալու ինքնընկալման և այստեղից ենթադրվող համապատասխան արժեքային համակարգի և վարքի ձևավորումն է:

Սակայն նկատենք մի շատ կարևոր հանգամանք: Որպեսզի քաղաքացիական կրթությունն աշակերտի համար չդառնա խաղ ու ժամանցի առարկա, անհրաժեշտ է, որ հենց դպրոցական կյանքն իր ամբողջությամբ դառնա նրա համար բաց հասարակության գաղափարախոսության ընկալման, յուրացման և իրականացման դաշտ:

Հավելված 5

Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակ (նախապատմությունը, էությունը, հեռանկարները)

Մանկավարժական մտքի պատմությունը հարուստ է բազմատեսակ գաղափարներով, որոնցից շատերը, այս կամ այն չափով իրականացվելով, համամարդկային գործունեության պատմության մեջ ամրագրվել են որպես մանկավարժական ավանդույթներ:

Սակայն պատահական չէր, որ որպես կրթության ոլորտի կազմակերպման եղանակ կայացավ և ամենուր գերակայեց խմբային եղանակը՝ իր դաս-դասարանային և դասախոսություն-սեմինարային տարատեսակներով:

Արդեն միջին դարերում գիտական մտածելակերպի ձևավորման, բնագիտության կայացման ու զարգացման հետ միաժամանակ համամարդկային մակարդակով կարևորվեցին զանգվածային գրագիտության ապահովման, գիտելիքների ձեռքբերման ու գիտական աշխարհայացքի ձևավորման խնդիրները: Այս խնդիրների լուծման համար համեմատաբար ավելի բարենպաստ ու արդյունավետ գտնվեցին հենց խմբային ուսուցման գաղափարները:

Սակայն XX դարն արդեն կարևորեց համընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի հարցը, որը մի կողմից՝ ամրագրեց հանրակրթությունը որպես համամարդկային արժեք, մյուս կողմից՝ բացահայտեց խմբային ուսուցման սկզբունքային սահմանափակությունները: Միաժամանակ, ավելի կարևորվեց մտածողության ու գործունեության ընդհանուր մեթոդների ու միջոցների յուրացման հարցը: Սա արդեն պահանջում էր այնպիսի ուսուցման գործընթաց, որը կապահովեր ուսումնական խմբի անդամների ավելի գործուն ընդգրկվածություն և ինքնուրույնության ու ինքնակազմակերպման ավելի ցայտուն դրսևորումներ:

Խմբային ուսուցման սահմանափակությունների հաղթահարմանն ու նոր ուսումնադաստիարակչական խնդիրներին համապատասխանող ուսուցման ձևերի մշակմանն ուղղված որոնումների արդյունքում էլ հենց ձևավորվեց կոլեկտիվ ուսուցման գաղափարախոսությունը:

Նախապատմությունը

Առաջին գործնական նորարարությունները կապված են Ա.Ռիվինի մանկավարժական գործունեության հետ: Դեռ անցած դարի սկզբներին նա արդեն մշակել ու իրագործում էր ուսուցման գործընթացի կազմակերպման մի տարբերակ, որը հիմնված էր սովորողների փոփոխական կազմով զույգերով հաղորդակցման աշ-

խատաձևի վրա[1]: Հետագայում նրա աշակերտներն ու հետևորդները 30-ական թթ. ստեղծեցին Րիվինի գաղափարների վրա հիմնված բարձրագույն հաստատություն՝ առանց դասախոսների և ավանդական բուհական կառույցների[2]:

Րիվինի և նրա հետևորդների գործնական նվաճումները հիմք ծառայեցին տեսական լուրջ ընդհանրացումների համար: Վ.Դյաչենկոն հարկադրված եղավ վերանայել մանկավարժության տեսական հիմքերը, որի արդյունքում ստեղծվեց ժամանակակից դիդակտիկան՝ ուսմունք ուսուցման էության, կազմակերպչական ձևերի և պատմական զարգացման օրինաչափությունների մասին [79]: Համաձայն այդ մոտեցման՝ կրթության կազմակերպման պատմահասարակական զարգացման փուլերը երեքն են. կրթության կազմակերպման անհատական եղանակ (սա գերակայել է մինչև միջին դարերը), կրթության կազմակերպման խմբային եղանակ (ձևավորվել է միջին դարերում և գերիշխում է մինչև մեր օրերը), կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակ (արդեն նշմարելի են կայացման սկզբնական դրսևորումները):

Վ.Դյաչենկոյի տեսությունը հնարավորություն տվեց ոչ միայն հետևել մանկավարժական պրակտիկայում իրականացվող կոլեկտիվ ուսուցման նորարարություններին, այլ նաև կազմակերպել խմբային եղանակից կոլեկտիվ եղանակի անցմանը նպատակաուղղված հատուկ մանկավարժական փորձարարական տարածքներ: Ռուսաստանում, Ղազախստանում և վերջերս արդեն նաև Հայաստանում գործող նման բազմաթիվ տարածքներում կատարվող աշխատանքների արդյունքում արդեն ձևավորվել են ուսուցման կոլեկտիվ եղանակի կառուցման մեթոդաբանական սկզբունքները, մշակվել ու փորձարկվել են մասնագետների պատրաստման հայեցակարգային հիմքերը, կազմավորվել և արդեն լուրջ գործունեություն է ծավալում, այսպես կոչված, ՈւԿԵ-ականների մանկավարժական հասարակական շարժումը[3]:

---

[1] Ցավոք, Ալեքսանդր Րիվինի մասին մեր ունեցած տեղեկությունները հարուստ չեն: Նրա գործունեության և մանկավարժական հայացքների մասին որոշ պատկերացումներ կարելի է կազմել իր աշակերտների և համախոհների հուշագրություններից և մանկավարժական աշխատություններից:
Ա.Րիվինը ծնվել է 1877 թվականին, ապրել է Ուկրաինայում, խորհրդային իշխանության տարիներին տեղափոխվել է Մոսկվա, մահացել 1944 թվականին՝ անհայտության և չքավորության մեջ: Արդեն 1918 թվականին Կիևից ոչ հեռու գտնվող Կորնինո բնակավայրում Րիվինը բարձր դասարանի աշակերտների ուսուցումը կազմակերպում է զույգային փոխհաղորդակցության միջոցով: Հետագայում այդ մեթոդը կոչվեց «Կորնինյան»: Մոսկվայում Րիվինն իր մեթոդը հատկապես ակտիվ ներդրեց անգրագիտության վերացման խնդիրները լուծելիս: Չնայած հանրակրթական դպրոցներում արգելված լինելուն՝ Րիվինն ակտիվ պրոպագանդում էր իր մեթոդը՝ ցուցադրելով այն տարբեր ակումբներում, զբոսայգիներում, ուսումնական հաստատություններում:

[2] Այս արտասովոր իրադարձության մասին տեղեկություններ կան հետևյալ աղբյուրներում.

- *Брейтерман М.*, Диалоги // Учительская газета, 31 января, 1989 год.
- *Чаган,* Дикий ВУЗ // Революция и культура, N 11, 1929 год.

[3] ՈՒԿԵ-ական շարժումը ներկայացված է այն մանկավարժ գիտնականների, պրակտիկների, կառավարիչների, մեթոդիստների գործունեությամբ, որոնք իրենց մասնագիտական ոլորտում նպատակաուղղված նպաստում են կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացմանը: Արդարացիորեն այդ շարժման կենտրոնը կարելի է համարել ՌԴ Կրասնոյարսկի մարզը, որտեղ արդեն պետական մակարդակով ստեղծված է կոլեկտիվ եղանակի կառուցմանը նպատակաուղղված մարզային նորարարական համալիր: Թողարկվում է մասնագիտացված պարբերական «Коллективный способ обучения», ստեղծված է «Կոլեկտիվ ուսուցման եղանակ» մանկավարժական հասարակական կազմակերպությունը (մանրամասն տե՛ս [107, 164]):

Էությունը և դրսևորման առանձնահատկությունները

Կոլեկտիվ ուսուցման ամենաընդհանուր նկարագիրը հետևյալն է. ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ ուսումնադաստիարակչական գործընթացի և՛ սուբյեկտ է, և՛ նպատակ, և՛ միջոց: Այսինքն՝ ուսումնական խումբը ինքնակազմակերպվող, ինքնակառավարվող և ինքնազարգացող կոլեկտիվ է: Սա մի կողմից՝ ենթադրում է ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար կազմված անհատական ուսումնադաստիարակչական ծրագրերի առկայություն, մյուս կողմից՝ այդ ծրագրերի իրականացմանը նպատակաուղղված համընդհանուր համագործակցություն[1]:

Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակը հենց կոլեկտիվ ուսուցման գաղափարն իրականացնող կրթության ոլորտի կազմակերպման եղանակն է: Այն արմատապես տարբերվում է կրթության կազմակերպման խմբային եղանակից:

Ուսումնական խումբը. - Ուսուցման կազմակերպման խմբային եղանակի դեպքում ուսումնական խումբը կազմվում է միատարիք ու միամակարդակ անդամներից: Միևնույն ուսումնական խմբում կարող են ընդգրկվել միայն նրանք, ովքեր ընդհանուր ուսումնական ծրագրի միևնույն հատվածն են յուրացրել և որոնց մնացել է յուրացնել ընդհանուր ծրագրի մյուս, նույնպես միևնույն, հատվածը:

Կոլեկտիվ եղանակի դեպքում ուսումնական խմբի կազմը տարատարիք ու տարամակարդակ է: Միևնույն ուսումնական խմբի կազմում կարող են ընդգրկված լինել ընդհանուր ծրագրի տարբեր հատվածներ յուրացրած և տարբեր հատվածներ յուրացնող անդամներ:

Ուսումնական պարապմունքները. - Խմբային եղանակի դեպքում ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով: Ուսումնական խմբի բոլոր անդամները զբաղված են միևնույն գործով, յուրացնում են միևնույն թեման, աշխատում են միևնույն ձևով, այդ գործի համար նրանց բոլորին հատկացված է միևնույն ժամանակահատվածը:

Կոլեկտիվ ուսումնական պարապմունքներին բնորոշ է ընդհանուր ճակատի բացակայությունը: Ուսումնական խմբի տարբեր անդամներ կարող են զբաղված լինել տարբեր գործերով, յուրացնել տարբեր թեմաներ, աշխատել տարբեր ձևերով:

Ուսուցման գործընթացը. - Խմբային ուսուցումն իրականացվում է դասերով, որոնք կազմակերպվում են ընդհանուր խմբի համար և իրարից բաժանվում են խմբի բոլոր անդամների համար նախատեսված ընդհանուր դասամիջոցով: Յուրաքանչյուր դաս նվիրվում է մի որևէ ուսումնական առարկայի մի որևէ թեմայի:

Կոլեկտիվ ուսուցման գործընթացում տարբեր աշակերտներ կարող են ուսումնասիրել տարբեր ուսումնական առարկաներ, ընդմիջումներ անել տարբեր ժամանակահատվածներում:

[1] Սոցիոլոգիայում և հոգեբանության մեջ «կոլեկտիվ» հասկացությունը նշանակում է իքնակազմակերպման բարձրագույն մակարդակով օժտված խումբ: Մանկավարժության մեջ, հատկապես խորհրդային, այս հասկացությունն ավելի շատ շահարկվում էր որպես գաղափարախոսական արժեք: Այնուամենայնիվ, խորհրդային մանկավարժությունը բավական լուրջ նվաճումներ ունեցավ այս ոլորտում:

Համակազմը. - Ուսուցման խմբային եղանակում խիստ առանձնացված են իրարից տարբեր երկու խմբեր՝ աշխատանքը կազմակերպողների ու սովորեցնողների խումբը և սովորողների խումբը:

Կոլեկտիվ եղանակում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամ և՛ սովորող է, և՛ սովորեցնող, և՛ աշխատանքը կազմակերպող:

Ուսուցման ծրագրի կառուցվածքը. - Խմբային ուսուցման ժամանակ ընդհանուր ծրագիրը ներկայացվում է բաժիններով, որոնք կազմված են թեմաներից: Բաժինները, իսկ բաժինների ներսում՝ թեմաները դասավորվում են խիստ հաջորդական, գծային կարգով, որն էլ պարտադիր է բոլոր սովորողների համար: Փաստորեն, բոլորն ընդհանուր ծրագիրը յուրացնում են բաժինների ու թեմաների միևնույն հաջորդականությամբ:

Կոլեկտիվ ուսուցման ժամանակ ծրագիրը ներկայացվում է միայն ներքին տրամաբանական կապերով պայմանավորված կառուցվածքով, որը հնարավորություն է տալիս կազմել ընդհանուր ծրագրի յուրացման տարբեր հաջորդականություններ: Այսինքն՝ տարբեր սովորողներ ծրագիրը կարող են յուրացնել բաժինների ու թեմաների տարբեր հաջորդականությամբ[1]:

Կայացման հեռանկարները

Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացումը ենթադրում է աստիճանական կառուցման հատուկ մեթոդաբանություն: Այստեղ ոչ այնքան կարևոր են ուսումնադիդակտիկ միջոցների առկայությունը, որքան մանկավարժական կադրերի մանկավարժական աշխարհայացքային նոր պատկերացումների ձևավորումը, ինչը միայն լսելով ու քննարկումներով չի կարող ապահովվել: Անհրաժեշտ է ստեղծել համապատասխան գործնական տարածքներ, որոնք հնարավորություն կտան մասնագետներին յուրացնել կոլեկտիվ ուսուցմանը բնորոշ իրադրությունները: Սա այն դեպքն է, երբ գիտամեթոդական մշակումները, կադրերի պատրաստումը և գործնական տարածքների կայացումը կատարվում են միաժամանակ:

Հայաստանում վերջին տարիներին կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացմանը նպատակաուղղված բուռն և արդյունավետ գործունեություն է ծավալել հատկապես «Մանկավարժական նախաձեռնություն» հայկական ասոցիացիան:

Մեծ աշխատանքներ են կատարվում Կրթության ազգային ինստիտուտում, որտեղ մշակվում և իրականացվում են կոլեկտիվ եղանակի կայացմանն ուղղված համակարգային բարեփոխական ծրագրեր:

[1] Գոյություն ունեն և արդեն երկար տարիներ կիրառվում են կոլեկտիվ ուսուցման մի շարք ընդհանուր մեթոդիկաներ: Սրանց կարևորագույն նշանակությունն այն է, որ մի կողմից՝ դրսևորում են կոլեկտիվ ուսուցման առանձնահատկությունները, մյուս կողմից՝ հնարավորություն են տալիս դաս-դասարանային համակարգի շրջանակներում կազմակերպել կոլեկտիվ ուսուցման գործընթաց (տե՛ս [6, 27, 28, 31, 46]):

Խոստումնալից հեռանկար ունի Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը (ՀՍԻԿ), որտեղ մշակվում և փորձարկվում է ուսուցիչների վերապատրաստման դասընթացների հայեցակարգ՝ կոլեկտիվ ուսուցման գաղափարախոսությամբ:

Առանձնահատուկ առաքելություն ունի վերջերս ստեղծված «Բյուրակն» կրթահամալիրը: Այն հանրապետության ամբողջ տարածքում սփռված կրթօջախների ցանցային կառույց է, որտեղ իրականացվում են պետական հանրակրթական ծրագրերը կրթության կազմակերպման նոր գաղափարախոսությամբ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում առաջատարի դերը կարող է ստանձնել Արտակարգ իրավիճակների վարչության Ճգնաժամային կառավարման ակադեմիան: Այստեղ իրականացվում են կոլեկտիվ ուսուցման սկզբունքները և արդեն նկատելի են առաջին նշանակալից հաջողությունները:

Կարևոր նշանակություն ունեն Հայաստանի տարբեր մարզերում ընտրված մի շարք դպրոցներում կատարվող նորարարական աշխատանքները, որտեղ աստիճանաբար կառուցվում են կոլեկտիվ ուսուցման հիմնապատերը:

Վերջում ընդգծենք, որ կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակը, որպես կրթության պատմահասարակական զարգացման հաջորդ աստիճան, կարող է կայանալ միայն համընդհանուր մանկավարժական ստեղծագործության միջոցով: Եվ այն երկրները, որոնք կմասնակցեն այդ ստեղծագործական գործընթացներին, կվայելեն ընդհանուր առաջանցիկ զարգացման առավելությունները: